

## Կարծիք

Թամարա Նելսիկի Պոդոսյանի «17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի լեզվական քննություն» թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

17-րդ դարը հայ գրքի ցայսօր անընդհատելի տպագրության սկիզբն է: Ինչպես նշում է Ռ. Իշխանյանը՝ «Այս դարում էր, որ հայ գրքի տպագրությունը անջատ, ընդհատվող պոռթկումներից վերածվեց մշտական անընդմեջ մի գործողության, որ, այդպես շարունակվելով, հասավ մեր օրերը» (Ռ. Իշխանյան, Հայ գիրքի պատմություն, Երևան, 2012, էջ 32): Այս դարում տպագրված 165 գրքից 20-ը լույս է տեսել Մարսելում, 32-ը՝ Վենետիկում, իսկ 40-ը՝ Ամստերդամում՝ այսպիսով այդ քաղաքները դարձնելով հայ գրքի տպագրության կարևոր օջախներ: Հենց այս երեք քաղաքներում էլ 12-ամյա ընդմիջումներով տպագրվել են Թամարա Պոդոսյանի ատենախոսության բնագիր գրքերը՝ 1675թ. Մարսելում «Արհեստ համարողութեան ամբողջ և կատարեալ» գիրքը, 1687թ. Վենետիկում «Պարզաբանութիւն հոգեւնուագ սաղմնուսացն Դարթի մարգարէին» գիրքը և 1699թ. Ամստերդամում «Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ եւ դրամից բոլոր աշխարհի» գիրքը: Այս երեք գրքերի լեզվական համակարգի քննությամբ ատենախոս Թամարա Պոդոսյանը հետաքրքիր օրինաչափություններ է բացահայտում 17-րդ դարի աշխարհաբարի վիճակի, զարգացման միտումների մասին: Հատկանշական է, որ վերոնշյալ երեք գրքերը, լինելով տարաբնույթ գործեր, ունենալով տարբեր հեղինակներ կամ թարգմանիչներ, տպագրվելով տարբեր վայրերում, ըստ էության միաժամանակ աշխարհաբարի առաջին հրապարակային պաշտպանություններն են. դրանց հեղինակները կամ մեկնիչ-թարգմանիչները աշխարհաբարով գրելը հիմնավորում էին գրաբարի՝ հասարակ աշխարհականների համար անհասկանալի լինելով և կարևորում էին ոչ եկեղեցականների համար շահավետ գործ անելը: Այս մասին խոսվում է երեք գրքերի առաջաբաններում: «Արհեստ համարողութեան» գիրքը գրվել է վաճառականների մտքի դեգերումները դյուրացնելու համար (էջ 14),

«Պարզաբանութիւնը»՝ սրբազան գրքի քաղցրութիւնը դյուրապէս իմանալու համար (էջ 19), իսկ «Գանձը»՝ մեր բանասեր վաճառական եղբայրներին օգտակար լինելու համար (էջ 25):

Ինչպէս աշխարհաբարի քերականներից Հ. Հովվն ու Մ. Սեբաստացին էին ժամանակին նկատել, Թամարա Պողոսյանն էլ իր քննվող բնագրերում նկատում և ցույց է տալիս, որ հենց վաղ աշխարհաբարում արդեն տեսանելի են նրա երկճյուղ զարգացման սաղմերը: Այս առումով միանգամայն ողջունելի է հրապարակային պաշտպանության ներկայացված ատենախոսության ի հայտ գալը:

Խուսափելով ատենախոսության բովանդակության վերաշարադրանքից (այն բավարար չափով ներկայացված է սեղմագրում)՝ անդրադառնանք այն կարևոր առավելություններին, որ ունի սույն հետազոտությունը:

1. Թամարա Պողոսյանն իր աշխատանքում անդրադարձել է հայերենի բոլոր համակարգերին՝ հնչյունաբանությունից մինչև շարահյուսություն, ներկայացրել է և՛ գրաբարյան, և՛ միջինհայերենյան, և՛ աշխարհաբարյան իրողություններ, յուրաքանչյուր գլխի վերջում հստակ առանձնացրել է աշխարհաբարյան բոլոր իրողությունները, որոնք հանդիպում են քննվող բնագրերում: Քննվող հարցերի լայն շրջանակը վկայում է, որ մենք գործ ունենք խոր ու բազմակողմանի մի հետազոտության հետ, որն իր քննության սկզբունքներով ու մեթոդներով, ուշագրավ ու ճշգրիտ եզրակացություններով նշանակալից ավանդ է բերում 17-րդ դարի հայերենի լեզվավիճակի ուսումնասիրության ասպարեզում: Աշխատանքը գրված է գիտական բարձր մակարդակով, տեսական հաստատուն հիմքի վրա և փաստական նյութի խոր իմացությամբ: Որևէ դրույթ, պնդում ներկայացնելիս ատենախոսը բերել է բավարար քանակի և ճիշտ, դիպուկ բնագրային օրինակներ:

2. 17-րդ դարի մարդու լեզվամտածողությունը հասկանալու համար արժեքավոր է բառապաշարի քննության 3-րդ ենթագլուխը, որտեղ Թամարա Պողոսյանը համապարփակ ներկայացրել է, թե ինչ մաթեմատիկական եզրույթներ էին կիրառվում 17-րդ դարում, ընդհանուր էին արդյոք դրանք ներկայացված երկու

նույնաբնույթ գործերում, և դրանցից որոնք են գործածական նաև այսօր (էջ 49-52): Պարզվում է, որ գումարելին բարդելու թիվն է, նվազելին՝ մեծ թիվը կամ համարքը, հանելին՝ պզտիկ թիվը կամ փոքր համարքը, տարբերությունը՝ մնացածը: Այսինքն՝ մաթեմատիկական այս պարզագույն գործողությունները դեռ արտահայտվում են նկարագրական կազմություններով և դրանց եզրույթները՝ գումարելի, նվազելի, հանելի, չեն գործածվում բնագրերում, միգուցե նաև 17-րդ դարում ընդհանրապես: Դրան հակառակ՝ տերմինային արժեք ունեն բազմապատկել, բաժանել, խնդիր, կանոն բառերը:

3. Ատենախոսը ներկայացրել է 29 նորակազմություն, 11 նորակազմ դարձվածքային միավոր. սրանք շատ կարևոր են վաղ աշխարհագրաբանական բառապաշարի ուսումնասիրության համար: Ի դեպ, նորակազմ բառերի ցանկից համաձայն չենք միայն *ցորենահատ* բառի հետ (էջ 45): ՆՀԲ-ում վկայված է *ցորենհատ* բառը՝ որպես ցորենի հատիկ: Այստեղ ավելի ճիշտ գործ ունենք իմաստափոխության հետ, քանի որ *ցորենահատը* դարձել է չափման միավոր:

4. Շարահյուսական իրողությունների շարքից հատկապես արժեքավոր դիտարկում է այն, որ 17-րդ դարում (ի տարբերություն գրաբանի և միջին հայերենի) բացահայտիչը դրսևորում է կետադրության կանոնարկման փորձեր: Քննվող երկերում դրանք բացահայտյալից անջատվում են և՛ բուրով, և՛ ստորակետով, և՛ միջակետով (էջ 113): Սա կարևոր զարգացում էր, որ դարձավ բացահայտիչ-բացահայտյալը որոշիչ-որոշյալ կապակցությունից տարբերակելու գլխավոր միջոցը:

5. Առանձին հավելվածներով առանձնացվել են նորակազմությունները, չափման բազմազան միավորները, մաթեմատիկական եզրույթները (էջ 140-144): Սրանք ավելի են մեծացնում աշխատանքի գործնական նշանակությունը, ինչպես նաև ամփոփում են աշխատանքի արդյունքները:

6. Կատարված ուսումնասիրությունը, եզրահանգումները հիմք են տալիս ատենախոսին պնդելու, որ 17-րդ դարի տպագիր գրքերում աշխարհագրաբանական միասնական է, քանի որ և՛ արևելյան, և՛ արևմտյան բարբառախմբերին, ընդ սմին նաև

և՛ արևելահայերենին, և՛ արևմտահայերենին բնորոշ լեզվական իրողությունները տարանջատված կիրառություն չունեն, ոչ էլ հավասարաչափ են բաշխված (էջ 127): Սա շատ կարևոր եզրահանգում է, որն ամբողջացնում է կատարված ուսումնասիրությունը:

Թամարա Պողոսյանի ատենախոսության վերաբերյալ սկզբունքային դիտողություններ չունենք: Սակայն կուզենայինք անդրադառնալ որոշ հարցերի, որոնք որոշակի ճշգրտման կարիք կարող են ունենալ:

1. Ատենախոսը, բարեխղճորեն բերելով տարբեր լեզվաբանների տեսակետները այս կամ այն հարցի շուրջ, երբեմն նշում է իր կարծիքը (էջ 9, 25-26), երբեմն խուսափում որևէ տեսակետ պաշտպանելուց կամ նոր միտք հայտնելուց: Օրինակ՝ շատ արժեքավոր կլիներ, որ Թամարան իր կարծիքը հայտնե՛ր՝ արդյոք «Արհեստ համարողութեան» երկի հեղինակը կամ թարգմանիչը կարող է Հ. Հովսեփի լինել, թե ոչ (էջ 15-17): Հասկանում ենք, որ ատենախոսության հիմնական նպատակը դա չէ, բայց հաշվի առնելով ծավալուն, բազմաշերտ լեզվական քննությունը, որ ատենախոսը կատարել է, կարծում ենք, որ ևս մի փոքր ջանք գործադրելու դեպքում հնարավոր կլիներ որևէ պնդում անել:

2. Կարծում ենք, որ վաղաշխարհաբարյան բառերի ցանկից պետք է հանել *դադար//դադր*, *պօղազ* փոխառությունները, *փոթոթել* բայը և *խօյ* վերաբերականը: Դրանցից առաջին երկուսը վկայված են ՆՀԲ-ում՝ կիրառված Ալեքսիանոսի և Ն. Քուչակի կողմից, իսկ մյուս երկուսը վկայված են ՄՀԲ-ում՝ մեկը *փոթոթ*, *փոթթել*, *փոթոթային*, *փոթոթություն* կազմություններով, մյուսը *խոյ* ձևով:

3. Ձևաբանության քննության բաժնում բերված աղյուսակներում կարծում ենք՝ ճիշտ կլիներ գուտ աշխարհաբարյան ձևերը (հոգնակի թվի *ի* հոլովման ենթարկվելը, բացառականի *ից*-ով կազմությունը, *ում*-ով ներգոյականը, *նիս*-ով հոգնակի ստացականության դրսևորումը) տարբերակել միջինհայերենյան կազմություններից և հստակ ցույց տալ, թե քանի տոկոսն է բաժին ընկնում միջին հայերենին, քանիսը՝ աշխարհաբարին:

4. Ատենախոսը նշում է, որ վաղ աշխարհաբարի խոնարհման համակարգի որոշ իրողությունների անդրադարձել է Ռ. Իշխանյանը («Նոր գրական հայերենը XVII-XVIII դդ» գրքում), ինքը դրանց կողքին քննել է նաև այլ առանձնահատկություններ (էջ 73), սակայն լավ կլիներ, որ դրանք որևէ կերպ առանձնացվեին, այլապես հասկանալի չէ՝ որոնք են արդեն նշված բայական հատկանիշները, և որոնք՝ նորերը: Բաց է մնացել նաև դերբայների լծորդ ձայնավորների հարցը (օրինակ՝ ինչ դրսևորում ունեն / ի խոնարհման բայերը):

5. Ատենախոսության որոշ հղումներում աշխատությունների հրատարակության վայրը, տարեթիվը բացակայում են (էջ 12, 21, 34, 71): Դրանք ուղղված են գրականության ցանկում և ներկայացված են, ինչպես հարկն է:

Նշենք, որ մեր դիտողությունները չեն վերաբերում աշխատանքի էական կողմերին, չեն նսեմացնում նրա գիտական բարձր արժեքը և հեշտ ուղղելի են: Ուստի կարող ենք փաստել, որ Թամարա Նելսիկի Պոդոսյանի «17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի լեզվական քննություն» թեմայով թեկնածուական ատենախոսությունը շարադրված է գիտական բարձր մակարդակով, ունի կարևոր արժեք: Աշխատանքի բովանդակությունը արտացոլված է սեղմագրում և տպագրված 12 հոդվածներում: Այս ամենը մեզ թույլ է տալիս միջնորդելու Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող 019 մասնագիտական խորհրդին՝ Թամարա Պոդոսյանին շնորհելու իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Գրախոս՝ բանասիրական գիտությունների թեկնածու *Մանվ* Ա. Կարապետյան

15.03.2020թ.

*Ա. Կարապետյան*  
*Խաչատրյան*  
*ՅՊԿ ցիցուսիս ինստիտուտ* *Վ. Ա. Կարապետյան*